ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.04.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 44/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Վանգաս» ՍՊԸ-ի 07.04.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-44/17 բողոք) և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և ԳԲԽ-44/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 20.04.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1.<u>«Վանգաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Վանգաս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 07.04.2017թ. բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կցորդների, խոհանոցային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով նմանատիպ են համարվել ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների մատակարարման պայմանագրերը (Հրավերի 1-ին մասի 2-րդ բաժին, 2.3 կետ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ընկերությանը ծանուցվել է, որ 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Վանգաս» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Ուստի հրավերով սահմանված կարգով Ընկերությունը ներկայացրել է «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկայի նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրի («Էյչ գրուպ» ՍՊԸ-ի հետ 27.08.2015թ. կնքված N 1-2015 պայմանագիր) պատճեն, ինչպես նաև վերջինիս պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը՝ հաշիվ-ապրանքագիր (N 008588 առ 10.11.2015թ.): Համաձայն այդ պայմանագրի՝ Ընկերության կողմից մատակարարվել է ՈՒՐԱԼ-43206 բազային մեքենայի հիման վրա ազոտ գազալցակայան:

Ներկայացված պայմանագիրը գնահատող հանձնաժողովի կողմից չի համարվել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված նմանատիպ համարվող ապրանքների մատակարարման պայմանագիր և հանձնաժողովի կողմից առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել այլ՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ 19.05.2014թ. կնքված ՇՀԱՊՁԲ-20/4-1 պայմանագիրը և հանձնման-ընդունման արձանագրությունները: Համաձայն հիշյալ պայմանագրի՝ գնման առարկա են հանդիսացել «Էքսկավատոր-բարձիչ» և «բարձր անցանելիության ավտոկռունկ» ապրանքատեսակները:

Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից այդ պայմանագիրը ևս գնահատվել է ոչ նմանատիպ և 28.03.2017թ. թիվ 1.4 որոշմամբ «Վանգաս» ՍՊԸ-ի՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշի առկայությունը հավաստելու համար

ներկայացված փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել հայտը:

Ընկերությունը գտնում է, որ «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու հարցում հանձնաժողովը կայացրել է սխալ որոշում, որի արդյունքում խախտվել են Ընկերության շահերը: Ակնհայտ է, որ հանձնաժողովի անդամները չունեն մասնակիցների հայտերը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողությունները կամ որոշումներ կայացնելիս՝ առաջնորվել են այլ սկզբունքներով, որի արդյունքում նշված չափաբաժինների մասով գնումն անհիմն թանկացել է 20 682 000 ՀՀ դրամով:

Ընկերությունը բողոքով նշել է, որ Ընթացակարգի շրջանակներում հարցումը կատարվել, այսինքն հրավերն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. N 220-Ն հրամանով հաստատված ցանկի 1.21 «ավտոմեքենաներ» կետում գրանցված մասնակիցներին:

ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի ապրիլի 13-ի N 220-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 1170-Ն հրամանով հաստատված «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների» ցանկի 1.21-րդ կետի համաձայն՝ գնման առարկա են հանդիսանում «ավտոմեքենաներ» ապրանքը:

Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի առարկաները հանդիսացել են ավտոտրանսպորտային միջոցներ (անիվավոր ինքնագնաց կամ ավտոմոբիլի միջոցով քարշակումով տրանսպորտային միջոցներ), և դրանք ներառված են հիշյալ 1.21-րդ ենթակետում:

Այսինքն, ըստ էության, նախկինում մեր կողմից մատակարարված ապրանքները հանդիսացել են Ընթացակարգի գնման առարկային նմանատիպ ապրանքներ, դասվել են նույն խմբին՝ վկայակոչված ցանկի 1.21-րդ կետով ապրագրված «ավտոմեքենաներ» ապրանքի խմբին, այսինքն նշված ապրանքատեսակների մատակարարումը ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝

Կարգ) 69-րդ կետի համաձայն՝ դասվում է համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբին, հետևաբար դրանց մատակարարման պայմանագիրը, Կարգի 69-րդ կետի ուժով, նույնպես պետք է դիտարկվի որպես համանման:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 69-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է Ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը գնահատեր հրավերի պահանջներին համապատասխանող *(Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:)*:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 31-րդ հոդվածի և Կարգի 69-րդ կետի պահանջները:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ցանկացած որոշման կայացումը, այդ թվում նաև՝ 28.03.2017թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը և արդեն իսկ կայացրած որոշումների կատարումը, որը Խորհրդի 12.04.2017թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

2. Չեղյալ համարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 28.03.2017թ. կայացրած՝ «Վանգաս» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ թիվ 1.4 որոշումը.

3. Չեղյալ համարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը 4-րդ չափաբաժնի մասով «Լու-Լի-Լու» ՍՊԸ-ին, իսկ 5-րդ չափաբաժնի մասով «Երվադա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-44/17 բողոքը քննող հանձնաժողովի 12.04.2017թ. ժամը 16:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.04.2017թ. թիվ ԴՎԱ/1148 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թվով 7 անվանում կցորդների և խոհանոցային սարքերի ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների մատակարարման պայմանագրերը և գնահատող հանձնաժողովը, որակավորման փաստաթղթերը գնահատելիս, առաջնորդվել է Կարգի 69-րդ կետի պահանջներով, որի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախավորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Վերոհիշյալից ելնելով և հաշվի առնելով այն փաստը, որ «Վանգաս» ՍՊԸ-ն որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, հրավերով սահմանված՝ ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների մատակարարման պայմանագրերի փոխարեն ներկայացրել է «ՈՒՐԱԼ-43206 մեքենայի բազայի վրա ազոտ տեսակի գազալցակայանի», ապա նաև «էքսկավատոր-բարձիչի» և «բարձր անցանելիության ավտոկռունկի» մատակարարման պայմանագրերը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-44/17 բողոքը քննող հանձնաժողովի 12.04.2017թ. ժամը 16:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-44/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 20.04.2017թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Վանգաս» ՍՊԸ-ի 07.04.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել և դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նույն ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Վանգաս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 06.03.2017թ. որոշումը:

<u>4. ԳԲԽ-44/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-44/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կցորդների և խոհանոցային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգը:

2. Ընթացակարգի հրավերի Մաս Ի-ի 2-րդ կետի 2.3-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային

ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: **Նմանատիպ են համարվում ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների մատակարարման պայմանագրերը:**

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Վանգաս» ՍՊԸ-ն:

4. Ընկերությունը հայտի թիվ 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված՝ Տեխնիկայի մատակարարման N 1-2016 պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 107 000 000 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.02.2017թ. որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, և որոշվել է Ընկերությանը ծանուցել սահմանված ժամկետում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

6. Ընկերության կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «Վանգաս» ՍՊԸ-ի միջև 27.08.2015թ. կնքված գազալցակայան ՈՒԳԶՍ-ԱՌ (ազոտ) (բազային մեքենայի տեսակը- ՈՒՐԱԼ-4326) (գազալիցքավորման կայան՝ ավիացիոն համակարգերի

ազոտով լիզքավորման համար 35 ՄՊա (350 կգուժ/սմ^2 ճնշմամբ)) մատակարարման պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 107 000 000 ՀՀ դրամ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.02.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար նմանատիպ են սահմանվել «ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների մատակարարման պայմանագրերը», մինչդեռ Ընկերության կողմից որպես նմանատիպ ներկայացվել է «գազալցակայան ՈՒԳԶՍ-ԱՌ՝ հիմնված ՈՒրալ-43206 մեքենայի բազայի վրա» տեխնիկայի մատակարարման պայմանագիրը, որը չի հանդիսանում ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոց: Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և ծանուցել Ընկերությանն առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.03.2017թ. որոշմամբ մերժել է «Վանգաս» ՍՊԸ-ի հայտը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված պայմանագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց հրավերի պահանջներին ոչ համապատասխան, քանի որ Ընթացակարգի հրավերով որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար հստակ սահմանված է ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների մատակարարման պայմանագրերը, մինչդեռ Ընկերության կողմից որպես նմանատիպ ներկայացնել է «Գազալցակայան ՈՒԳԶԱ-ԱՌ՝ հիմնված ՈՒրալ-43206 մեքենայի բազայի վրա» տեխնիկայի մատակարարման պայմանագիրը և ՀՀ պաշտպանության նախարարության հետ 19.05.2014թ. կնքված ՇՀԱՊՁԲ-20/4-1 պայմանագիրը, որի առարկան հանդիսանում են էքսկավատոր-բարձիչ ԷՕ-2626 և Ավտոկռունկը, որոնք գնահատող հանձաժողովի որոշմամբ չեն հանդիսանում ավտոմոբիլի քարշակումով տրանսպորտային միջոց:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Վանգաս» ՍՊԸ-ի 07.04.2017թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.04.2017թ. ԴՎԱ/1148 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ի, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ

պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2).....».

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման հավելված 3-ով հաստատված «Գնումների միասնական անվանացանկի (ԳՄԱ) կառուցվածքի» 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ հիմնական անվանացանկն ունի ծառի կառուցվածք և կազմված է մինչև ութ նիշ ունեցող ծածկագրերից, որոնք կապված են պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը նկարագրող բառերի հետ: Թվային ծածկագիրը բաղկացած է 8 նիշից և բաժանված է հետևյալ կերպ՝

1) առաջին երկու նիշերը ցույց են տալիս բաժինը (XX000000).

2) երրորդ նիշը ցույց է տալիս խումբը (XXX00000).

3) չորրորդ նիշը՝ դասը (XXXX0000).

4) հինգերորդ նիշը՝ դասակարգիչը (XXXXX000):

3.Վերջին երեք նիշերից յուրաքանչյուր դասին պատկանող գնման առարկաների նկարագիրն ավելի է հստակեցնում:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ ***համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:*** Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեութ-յան տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. «**Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի ապրիլի 13-ի N 220-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին»** թիվ 1170-Ն հրամանով հաստատված «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների» ցանկի 1.21-րդ կետի համաձայն՝

1.21	**Ավտոմեքենաներ**	1.21.1	Բեռնատար ավտոմեքենաներ
		1.21.2	Բեռնամարդատար ավտոմեքենաներ
		1.21.3	Մարդատար ավտոմեքենաներ (թեթև մարդատար ավտոմեքենաներ, ավտոբուսներ և միկրոավտոբուսներ)
		1.21.4	Հատուկ նշանակության ավտոմեքենաներ
		1.21.5	Ավտոմոբիլային տրանսպորտի շարժակազմ՝ անիվավոր ինքնագնաց կամ ավտոմոբիլի միջոցով քարշարկումով ավտոտրանսպորտային միջոցներ

		1.21.6	Գյուղատնտեսական տեխնիկա
		1.21.7	Շինարարական տեխնիկա
		1.21.8	Այլ մարդատար և ոչ մարդատար ավտոտրանսպորտային միջոցներ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից gnumner.am համացանցային կայքում հրապարակված գնումների միասնական անվանացանկի բացվածքի համաձայն՝ «34000 000» CPV կոդի տակ նախատեսված է «տրանսպորտային սարքեր և օժանդակ տրանսպորտային ապրանքներ» բաժինը, որի մեջ «34 100 000» CPV կոդի տակ ներառված է «ավտոմեքենաներ» խումբը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ***կցորդների և խոհանոցային սարքավորումների*** ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգի գնման առարկան, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. «**Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի ապրիլի 13-ի N 220-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին**» թիվ 1170-Ն հրամանով հաստատված «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների» ցանկի 1.21-րդ կետի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից gnumner.am համացանցային կայքում հրապարակված գնումների միասնական անվանացանկի բացվածքի, ***ներառված է «ավտոմեքենաներ» խմբի մեջ:***

Ընդ որում, Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերը ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. «**Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի ապրիլի 13-ի N 220-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին**» թիվ 1170-Ն հրամանով հաստատված «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների» ցանկի 1.21-րդ կետով նախատեսված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21» ծածկագրի տակ

ներառված ***«ավտոմեքենաների ձեռքբերում»*** գնման ընթացակարգի համար գրանցված հնարավոր մասնակիցներին:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների մատակարարման պայմանագրերը:

Ընթացակարգի 4-րդ (դաշտային խոհանոց (կցորդ խոհանոց)) և 5-րդ (խոհանոցային սարքեր (տեղափոխվող սալօջախ-ՊՊ-40)) չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «Վանգաս» ՍՊԸ-ի միջև 27.08.2015թ. կնքված ՈՒԳԶՍ-ԱՌ (ազոտ) գազալցակայանի (բազային մեքենայի տեսակը՝ ՈՒՐԱԼ-4326) մատակարարման և ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանգաս» ՍՊԸ-ի միջև 19.05.2014թ. կնքված էքսկավատոր-բարձիչ ԷՕ-2626-ի և ավտոկռունկի մատակարարման ՇՀԱՊՁԲ-20/4-1 ծածկագրով պայմանագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 06.03.2017թ. որոշմամբ մերժելով «Վանգաս» ՍՊԸ-ի հայտը, նշել է, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերը չեն հանդիսանում համանման (նմանատիպ) և չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին, քանի որ հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպոր-տային միջոցների մատակարարման պայմանագրերը, մինդեռ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրի գնման առարկան հանդիսանում են ՈՒԳԶՍ-ԱՌ (ազոտ) գազալցակայանը (բազային մեքենայի տեսակը՝ ՈՒՐԱԼ-4326) (գազալիցքավորման կայան՝ ավիացիոն համակարգերի ազոտով լիզքավորման համար 35 ՄՊա (350 կգուժ/սմ^2 ճնշմամբ) և էքսկավատոր-բարձիչ ԷՕ-2626-ն և ավտոկռունկը:

Կարգի 69-րդ կետի 1-ին պարբերությունը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ ***համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:*** ՀՀ

ֆինանսների նախարարության կողմից gnumner.am համացանցային կայքում հրապարակված գնումների միասնական անվանացանկի բացվածքի համաձայն՝ «34 100 000» CPV կոդով «ավտոմեքենաներ» խմբում ներառված են նաև «34141100» (կռունկ և ինքնաթափ բեռնատարներ), «34131120» («կցորդով բեռնատարներ») «34141380» (ինքնաթիռի վերալիցքավորման մեքենաներ) CPV կոդերով դասերը: Չնայած այն հանգամանքին, որ հրավերով նախատեսվել է, որ համանման (նմանատիպ) են համարվում ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների մատակարարման պայմանագրերը, այնուամենայնիվ Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերը նույնպես պետք է դիտարկել որպես համանման, քանի որ նշված պայմանագրերի առարկաները, համաձայն կարգի 69-րդ կետի, ներառված են համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբում:

Հետևաբար, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից 07.04.2017թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վանգաս» ՍՊԸ-ի 07.04.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել.

Դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նույն ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Վանգաս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 06.03.2017թ. որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ Հայրապետյան Գևորգ

Անդամ՝ Շիրինյան Սոնա